Սուրբ Առաքյալներ և Առաջին Լուսավորիչներ Թադեոս և Բարդողիմեոս

Քրիստոսի մասին առաջի անգամ Հայաստան և հայ ժողովրդին բերեցին Հիսուսի աշակերտներից՝ Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդողիմեոս Առաքյալները, որոնք կոչվեցին առաջին լուսավորիչներ:

Ավետարաններում **Սուրբ Թադէոս առաքյալը** հիշվում է տարբեր անուններով. Մի շարք վայրերում նա հայտնվում է որպես Ղեբեոս (Մատթ. 10:3), Հուդայի եղբայր Հակոբոս (Ղուկաս 6:16), Հուդա ոչ իսկարիովտացի (Հովհաննես 14:22) և Հուդա Յակոբյան (Գործք Առաքելոց 1:13):

Թադեոս առաքյալը, հետևելով Քրիստոսի պատգամին, նախ գնում է Եդեսիա, որտեղ բժշկում է Աբգար թագավորին, ով նամակ էր ուղարկել Քրիստոսին և բժշկություն խնդրել: Եդեսիայից հետո նա գնում է Հայաստան, որտեղ քարոզում և հրաշքներ է գործում, շատերին դարձի բերում: Թադեոս առաքյալին հաջողվում է դարձի բերել Սանատրուկ թագավորի դստերը՝ Սանդուխտին: Սանատրուկ թագավորի հրամանով նահատակվում են Թադեոս առաքյալն և Սանդուխտ կույսը:

Ս. Թադեոսի գերեզմանը գտնվում է Պարսկաստանի Ատրպատական գավառում: Նրա հիշատակին կառուցվել է մեծ եկեղեցի, որտեղ հաւատացյալներ այցելում են սրբի տոնին՝ ուխտի համար:

Բարդողիմեոս Առաքյալը համարվում է նաև հայ ժողովրդի առաջին լուսավորիչը: Հովհաննես ավետարանիչը նրան հիշատակում է Նաթանայել անունով երբ Հիսուս նրան կանչում է դառնալու համար տասներկու աշակերտներից մեկը:

Առաքյալը սկզբում քարոզում և տարածում է Քրիստոսի խոսքը Պարսկաստանում, ապա գնում է Հայաստան, որտեղ միանում է Թադեոս առաքյալին և միասին շարունակում առաքելությունը:

Բարդողիմեոս առաքյալը, մտնելով արքունիք, դավանափոխ է անում Սանատրուկ թագավորի քրոջը, որից հետո նա նահատակվում է:

Հայ եկեղեցու ավանդույթի համաձայն՝ Ս. Թադեոս առաքյալ իր հետ Հայաստան է բերում Քրիստոսի կողը խոցված գեղարդը: Այն մինչ օրս գտնվում է հայ եկեղեցու սեփականության ներքո: Մինչ այսօր Ս. Գեղարդը բազմաթիվ հրաշագործություններ է արել:

Այս շաբաթ օրը Հայ եկեղեցին նշելու է Սուրբ Թադեոսի և Սբ. Բարդուղիմեոս առաքյալների և հայ ազգի առաջին լուսավորիչների տոնը: